

---

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ



Հայերենագիտության մեջ, բարեբախտաբար, դեռ կան առաջատար մի քանի լեզվաբաններ, որոնք շարունակում են պահպանել այս ուղղության գիտականությունը, ստեղծում են մեծարժեք գործեր՝ նոր որոնումների և վերելքների մղելով գիտական միտքը: Նրանցից է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Գուրգենի Համբարձումյանը:

Նրա գործունեությունը կարելի է բնորոշել որպես հիրավի գիտնականին պատշաճող մտավոր ընթացք՝ վկայված շարունակական, իրար հաջորդող սեղմ կամ ծավալուն աշխատություններով: Եվ որ առավել կարևոր է, այդ գործերը լայն ընդգրկումով բացահայտում և լուծում են բազմաթիվ հարցեր, միաժամանակ առաջնային աղբյուր են հայերենի զանազան դրսևորումներ էապես ճանաչելու համար կամ անհրաժեշտ մեկնակետ են՝ օժտված աղբյուրագիտական հսկայական նյութով, որ հավաստիորեն ուղղորդում են հետագա ուսումնասիրողներին:

Վ. Համբարձումյանի հետազոտության ոլորտում գլխավորապես հայերենի նախագրային և գրավոր ժամանակաշրջանների պատմությունն է՝ ինչպես մասնակի խնդրառությամբ, այնպես էլ ընդհանրության մեջ և ընդարձակ ժամանակով, քննության առնված լեզվաբանական գիտակարգերի տարբեր ասպեկտներով և մեթոդաբանությամբ, սկսած ստուգաբանական ճշգրտումներից, վաղ, ուշ գրական և բարբառային երևույթներից մինչև արդի հայերենի հարցեր: Եվ այսօր նա՝ գիտության ասպարեզում ավելի քան չորս տասնամյակ անխտոր ընթացքով, բազմաշխատ, բայցև չնվազած եռանդով գիտնականը, բոլորում է իր յոթանասուն տարին, որ նաև առիթ է ևս մեկ անգամ, թեկուզ ակնարկով, ծանոթ լինելու նրա գիտական ժառանգությանը, գնահատելու նրա ավանդը հայագիտության մեջ:

Վ. Համբարձումյանը ծնվել է 1947 թ. հունիսի 20-ին ՀՀ Արագածոտնի մարզի (նախկին Թալինի շրջանի) Մաստարա գյուղում: 1965 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, որն ավարտել է 1970 թ.:

Նույն տարում ընդունվել է ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրան՝ գրաբար մասնագիտությամբ: 1974 թ. աշխատանքի է անցել լեզվի ինստիտուտում և մինչև օրս աշխատում է այնտեղ՝ սկսած կրտսեր գիտաշխատողից մինչև ինստիտուտի տնօրեն:

1979 թ. պաշտպանել է «Հովհաննես Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը», իսկ 1991 թ.՝ «18–19-րդ դդ. գրաբարի գործառնությունը և կառուցվածքը» թեմայով ատենախոսություն՝ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի, ապա դոկտորի գիտական աստիճան: Այդ տարիներին էլ աշխատել է ինստիտուտում որպես ավագ, ապա առաջատար գիտաշխատող:

1993–2003 թթ. եղել է ինստիտուտի հայերենի տերմինաբանության և խոսքի մշակույթի բաժնի վարիչ, այնուհետև ղեկավարել է հայերեն գիտատեխնիկական տերմինաբանության ուսումնասիրության թեմատիկ խումբը, իսկ 2004 թ.՝ հայոց լեզվի պատմական զարգացման ուսումնասիրության բաժինը: 2011 թ. ընտրվել է լեզվի ինստիտուտի տնօրեն, իսկ 2012 թ. մինչև այժմ աշխատում է որպես ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ: Ինստիտուտում աշխատելու տարիներին՝ սկսած 1979 թ. համատեղության կարգով դասավանդել է Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտում, Երևանի պետական համալսարանում և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում՝ վարելով ընդհանուր և տիպաբանական լեզվաբանության, համեմատական քերականության, լատիներենի, հայոց լեզվի պատմության, գրաբարի դասընթացներ:

Հեղինակ է երկու տասնյակից ավելի մենագրությունների, գրաբարից նոր գրական հայերեն երեք ծավալուն գրքի թարգմանության (Հովհաննես Օձնեցի, Երկեր, 1999, 312 էջ, Միմենո կաթողիկոս Երևանցի, Ջամբո, 2003, 608 էջ, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Յաճախապատում ճառեր, Թեհրան, 2003, 360 էջ), հարյուրից ավելի գիտական հոդվածների և զեկուցումների թեզերի՝ լույս տեսած հայերեն և այլ լեզուներով:

Գրել է ուսումնամեթոդական ձեռնարկներ և ժողովածուներ («Գրաբարի ինքնուսույց», 1999, «Գրաբարի ձեռնարկ», 2004, «Լատիներենի դասագիրք», 2007, «Մայրենի լեզվի գրուցարան», 2007, «Հարյուր թելադրություն», 2010):

Մենագրությունները և գիտական հոդվածները վերաբերում են հայերենի ուսումնասիրության տարբեր բնագավառների: Այստեղ հարկ ենք համարում համառոտ անդրադառնալ դրանցից մի քանիսին՝ կենտրոնանալով հիմնական նորության և այս կամ այն հարցի կոնստրուկտիվ լուծման վրա:

Հայոց լեզվի պատմության հարցերի շարքում նախ հիշատակելի է «Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը» աշխատությունը: «Ժողովրդական գրույցների ամենայն հատկությամբ» (Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 188) օժտված այս պատմությունը պարունակում է VIII դ. լեզվական ուշագրավ տվյալներ՝ գրական ձևերի կողքին ներթափանցած բարբառային տարրեր, որոշ փոխառություններ, որոնց մանրամասն քննությամբ Վ. Համբարձումյանը փաստարկել է գրաբարի մեջ տարբերակայնության աճող միտումը: Հիշված հատույթում հեղինակային ոճը ևս կերպավորվել է նորովի, և դրա հանգամանալի քննությունը պարզել է պատմի մի ոճ, որ յուրացնելով ժողովրդական խոսքի աշխույժ տարրեր՝ հակվել է գեղարվեստական ժանրին: Այս աշխատությունը հայերենի պատմական ոճագիտության առաջնեկներից է:

Հայերենի պատմական ոճաբանության ոլորտի ուշագրավ աշխատություն է «XVII–XIX դդ. գրաբար ճարտասանական երկերի տերմինաբանությունը»՝ լույս տեսած «Հայոց լեզվի պատմության հարցեր» ժողովածուի մեջ (պր. 2, 1985): Ուսումնասիրողը մանրամասն անդրադառնում է տվյալ շրջանի գրաբար նմանատիպ բոլոր երկերի բառային և բառակապակցային տերմիններին ու դրանց անվանումներին՝ արժևորելով այդ միավորների նշակակությունը ոչ միայն հայերենի ընդհանուր տերմինաբանության, այլև՝ պատմության մեջ:

XVIII–XIX դդ. գրաբարի պատմությունը նախկինում չի եղել առանձին քննության առարկա, ուստի Վ. Համբարձումյանի «Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ–ԺԹ դդ.» ծավալուն աշխատությունը (1990) ոչ միայն լրացրեց այդ բացը, այլև ուղիներ կանխագծեց համանման նոր ուսումնասիրությունների համար, որովհետև այդ շրջանի գրավոր աղբյուրների փաստական նյութի ընդգրկումը մեկ աշխատության մեջ, այն էլ ընտրանքով, հեռու է վերջնական լինելուց: Այս աշխատությունը բացառիկ է գրավոր աղբյուրների ծավալով, հարցադրումների ընդգրկումով, լուծումների հստակությամբ և հիմնավորվածությամբ. այդ են վկայում աշխատության մասին գրախոսությունները, այլև՝ հետագա ուսումնասիրողների աշխատանքներում տեղ գտած գնահատությունները:

«Լատինաբան հայերենի պատմություն (14–18-րդ դդ.)» դարձյալ ծավալուն աշխատությամբ (2010) լատինաբան հայերենը որոշարկվում է և՛ որպես պատմական, և՛ որպես լեզվական երևույթ: Վ. Համբարձումյանը երկու հարյուրից անցնող գրական հուշարձաններից քաղված լեզվական փաստերի լայն ընդգրկումով քննել է լատինաբան հայերենի հնչյունական համակարգը, բառակազմությունը, քերականական կառուցվածքը՝ ներառյալ շա-

րահյուսական երևույթները, որոնք նախկինում գրեթե անտեսված են եղել. ըստ այդմ արհեստականորեն մշակված այդ համակարգը բնութագրել է 118 տարբերակիչ հատկանիշներով: Նախկինում լատինաբան հայերենի պատմության ներքին տարբերակում չէր կատարվել, և առաջին անգամ է, որ լեզվական ու պատմական տվյալների զուգադիր քննությամբ առարկայանում է գրաբարի պատմության այդ տեսական ժամանակաշրջանի ներքին ընթացքը՝ վաղ դրսևորումներից մինչև վերջին տասնամյակները:

Գիտական ուսումնասիրության առանձին ոլորտ է հայ բառարանագրության պատմությունը: Լույս են տեսել բանասեր-լեզվաբանի «Ակնարկներ հայ բառարանագրության» ընդհանուր խորագրով աշխատության երկու հատորները (հ. 1, 2006, հ. 2, 2015), որոնցում քննվում են ոչ միայն տեսական խնդիրներ, ուրվագծվում հայ բառարանագրության պատմության փուլերը, այլև ուշադրության առարկա են առանձին, մանավանդ «ոչ ծավալուն» բառարաններին առնչվող մասնավոր հարցեր, որոնց լուծմամբ ավելի ամբողջական և լիարժեք պատկերացում է ձևավորվում հայ բառարանագրության ընդհանուր պատմության վերաբերյալ: Այսպես, հեղինակն ամենայն մանրամասնությամբ, աղբյուրների իմացության հմտությամբ և բառաքննական լրացումներով վերլուծում է այնպիսի ձեռագիր բառարաններ, որոնց նախկինում ամենևին չեն անդրադարձել, և առանձնացնում է նոր տեսակներ («վանկաբառարան», «բառակազմական բառարան», «մատենակից բառարան» և այլն):

Հայերենի համեմատական-տիպաբանական ուսումնասիրության մեջ կա երկու նոր բնագավառ, որոնց չեն առնչվել նախորդ ուսումնասիրողները՝ հայերենի ընդգրկումը լեզուների նոստրատիկ ուսումնասիրության ոլորտ, և հայերենի ու ցեղակից լեզուների տվյալների տարբերակային (վարիատիվ) քննությունը: Այս թեմայով գրված երկու ծավալուն հոդվածները, պետք է նկատել, ունեն հիմնավորվածության մեծ աստիճան: Հայերենի վերաբերյալ տարբերակայնության (վարիատիվության) գաղափարը, հայտնի է, առաջ է քաշել Գ. Ջահուկյանը, որի տեսական հիմնավորման և գործնական կիրառության փորձեր են Վ. Համբարձումյանի՝ լույս ընծայած առանձին հոդվածները և զեկուցումների թեզերը:

Մյուս կարևոր քայլը, որ արվում է Վ. Համբարձումյանի համեմատաբանական աշխատանքներում, լեզվական միավորների արտալեզվական քննությունն է: Նա համեմատական-ստուգաբանական ուսումնասիրության առարկա բառը բնորոշում է որպես պատմական-առասպելաբանական նշանակիչ: Այս թեմային է վերաբերում «Հայերեն աստված բառի ծագումը և տիպաբանությունը» աշխատանքը (2002), որը նոր մոտեցման արդյունք է

հայոց դիցարանի գերագույն պաշտամունքի կրողի նշանակման (վերհանման) առումով:

Հայերենի համեմատական ուսումնասիրության բնագավառում Վ. Համբարձումյանի զեկուցումները և հոդվածները ժամանակին արժանացել են Գ. Ջահուկյանի ուշադրությանը, և պատահական չէ, որ դրանք տեղ գտան «Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության» երկու պրակներում (պր. 1–2, 1998–2007), ընդ որում՝ առաջինը լույս է տեսել անվանի լեզվաբանի հորդորով և խմբագրությամբ, երկրորդը այդ բնագավառի լավագույն մասնագետներից մեկի՝ Ն. Մ. Միմոնյանի խմբագրությամբ:

Հայերենի համեմատական-տիպաբանական հետազոտության ոլորտում Վ. Համբարձումյանի գիտական ամենամեծ ձեռքբերումը, թերևս, «Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ» գիրքն է (2012), որում ուշադրության առարկա են այնպիսի հարցեր, ինչպիսիք են հնդեվրոպական ծագման հայերեն արմատի տարբերակային վերականգնման խնդիրները, հայերենի տվյալների ընդգրկումը նոստրատիկ լեզուների համեմատական բառարանի մեջ և հետագա անելիքները, ինչպես նաև՝ իմաստային խումբ կազմող միավորների բառաքննական և ստուգաբանական ճշգրտումներ և լրացումներ, հայերենի և միլերենի ծագումնային առնչություններ, հայերեն ըմպել բառի ստուգաբանություն, Եր. Մեդրեցու «Բառգիրք հայոցի» անհայտ ծագման բառեր:

Վերջերս լույս է տեսել Վ. Համբարձումյանի «Հայերենը և հնդեվրոպերենը» (անգլերեն, 2014) գիրքը: Համեմատական-տիպաբանական տարբերակայնության հայեցակետից հեղինակը քննում է հայերենի բաղաձայնական համակարգի, համեմատական բառագիտության հարցեր, կատարում է մոտ մեկուկես տասնյակի՝ մինչև այժմ անհայտ ծագման համարվող բառերի ստուգաբանություններ:

Ընդհանուր լեզվաբանության բնագավառում բավական ուշագրավ է Վ. Համբարձումյանի «Լեզու, ոճ, խոսք» հոդվածը («Բանբեր Երևանի համալսարանի», 1981, 3, էջ 182–191): Նա, ի տարբերություն Հումբոլդտի, Սոսյուրի և ուրիշ հեղինակների առանձնացրած լեզու-խոսք (գործ-կարողություն) երկանդամ հակադրության, առաջարկում է լեզու-ոճ-խոսք եռանդամ հակադրությունը, ըստ որի՝ տրվում է ոճի բոլորովին նոր, տեսական առումով միանգամայն յուրօրինակ, հնագույն ժամանակներից ի վեր՝ հոետորական արվեստում բնորոշվող ձևակերպումից տարբեր հետևյալ սահմանումը. «Ուճը հաղորդակցման միջոցի (այսինքն՝ լեզվի) կիրառության (այսինքն՝ խոսքի) տարբերությունն է». ավելի պարզ՝ ոճը հաղորդակցման միջոցի տարբերությունն է: Տեսական այս հին և գիտության տարբեր ժամանակների

քննության առարկա երևույթը՝ ընդհանուր լեզվաբանական նոր քննությանը, բնորոշվում է միայն լեզվի սահմանում:

Վ. Համբարձումյանը տարբեր տարիների եղել է Ազգային գրադարանի, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական խորհրդի և ԵՊՀ-ում գործող ԲՈՀ-ի 009 (Ժ. 02.08. «Ռոմանական լեզուներ» վերջինս՝ գիտության դոկտորների թվի համալրման կարգով) գիտական աստիճան շնորհող խորհրդի անդամ: Ներկայումս Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի անդամ է, ինչպես նաև՝ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 019 (Ժ. 02.01. «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն») գիտական աստիճաններ շնորհող խորհրդի անդամ:

Լեզվի ինստիտուտի բաժնի վարիչի և տնօրենի պարտականությունները կատարելիս՝ նրա անմիջական մասնակցությամբ ինստիտուտում իրականացել են շատ ծրագրեր: 2003 թ. նրա նախաձեռնությամբ և Գ. Ջահուկյանի հավանությամբ ստեղծվեց «Լեզու և լեզվաբանություն» գիտական հանդեսը, որը այժմ լույս է տեսնում ինստիտուտի կողմից՝ տարին երկու անգամ:

Գիտության բնագավառում անխոնջ և բազմաբեղուն գործունեության համար Վ. Համբարձումյանն արժանացել է ՀՀ ԳԱԱ «Պատվոգրի» (2003 թ.), ՀՀ Ազգային ժողովի Պատվո (2012 թ.), ՀՀ սփյուռքի նախարարության «Մայրենիի դեսպան» (2013 թ.) մեդալների:

Նրա գիտական ղեկավարությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան են ստացել մեկ տասնյակից ավելի ասպիրանտ և հայցորդ, այժմ ղեկավարում է երեք հայցորդի գիտական թեմա: Մասնակցել է հանրապետությունում և արտերկրում կայացած միջազգային գիտաժողովների, հանդես եկել՝ դասախոսություններով (Կանադա, Ֆրանսիա, Գերմանիա, Իրանի Իսլամական Հանրապետություն, Լիբանան-Անթիլիաս):

Վ. Համբարձումյանի աշխատությունները նվիրված են հայերենի տարբեր խնդիրների՝ ընդհանուր և համեմատական քննություն, գրավոր և նախագրային շրջանների պատմություն, բառագիտություն և ստուգաբանություն, բառարանագրություն և բարբառագիտություն, լեզվի քերականական կառուցվածք և ոճաբանություն: Սրանց բոլորի վերաբերյալ նա ասել է փաստական հարուստ և աղբյուրներով ճշգրտված գիտական նոր խոսք:

ՏԻԳՐԱՆ ՍԻՐՈՒՆՅԱՆ